05.07.2018

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐՀԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի համաքաղաքացիներ

Շնորհավորում եմ բոլորիս ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ, որը մեր պետականության վավերագրերից է ու ինքնիշխան պետության հենասյունը:

Հավատարիմ մնալով ժողովրդավարական սկզբունքներին, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, աչքի առաջ ունենալով աշխարհի փորձը՝23 տարի առաջ կյանքի կոչվեց մեր երկրի գլխավոր և հիմնական օրենքը:

Հասարակական- քաղաքաականնոր պահանջները, ժամանակի թելադրանքն ու բարեփոխումների անհրաժեշտությունը դարձան գլխավոր մարտահրավերներ, ու2005 և 2015 թվականներին սահմանադրական փոփոխություններիհանրաքվեները կյանքիուղեգիր տվեցին իրենց առանցքում համազգային նպատակներ ու արժեքներ կրող Սահմանադրությանը:

Սահմանադրությամբ ամրագրված են հիմնարար շատ սկզբունքներ, որոնց նկատմամբ մեր հարգանքը պետք է լինի ընդգծված, որովհետև կայացած և ուժեղ պետության սկիզբն սկսվում է այստեղից և շարունակվում՝ որդեգրելով իրավական պետությանը բնորոշ բոլոր դրույթները և ուղենիշները:

Մայր օրենքն ամենից առաջ յուրաքանչյուր քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատություններն ամրագրող փաստաթուղթ է, մարդակենտրոն հռչակագիր, որի կենսագործման համար պատասխանատու ենք բոլորս:

Մեր երկրում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը, արձանագրված լուրջ և հիմնարար փոփոխությունները ևս մեկ ազդակ են օրենքի գերակայության, իրավաչափ հարաբերությունների ստեղծման ճանապարհին: Մայր օրենքն էլ նպաստելու է մեր ժողովրդի բարեկեցությանը, սոցիալական արդարության և համերաշխության ամրապնդմանը, արտաքին և ներքին կայունությանը:

Արդեն երկրորդ տարին հուլիսի 5-ին նշվում է նաև պետական խորհրդանիշների օրը: Կայացած ու ինքնիշխան պետության վավերագրերը՝ ՀՀ պետական դրոշը, զինանշանը և օրհներգը, ամբողջացնում են մեր երկրի դիմագիծը՝ դառնալով այցեքարտ ու կրողը հայ ժողովրդի պատմության, մշակութային արժեքների և պետականության:

Սիրելի համաքաղաքացիներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու անունից կրկին շնորհավորում եմ բոլորիս մեզ համար կարևոր ու նվիրական օրվա առթիվ: Յուրաքանչյուրս մեր աշխատանքով, մեր հնարավորությունների սահմաններում պետք է նպաստենք, որպեսզի մեր երկիրը հաստատուն քայլերով առաջ գնա՝ հավատարիմ սահմանադրական մեր ընտրած ուղուն, որպեսզի ապրենք և արարենք օրինապաշտ և իրավական երկրում՝ ապահովելով յուրաքանչյուրի բարեկեցիկ և արժանապատիվ կյանքով ապրելու իրավունքը: